ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2026 թվականի N 75-Լ

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 10 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3- րդ մասի դրույթներով՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին՝ որոշում է.

1.Հաստատել համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 23 ի թիվ 10 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) «Նոր Հաճըն համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 12-ի N 111-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

2)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 26 -ի N 116-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

3)ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան բնակավայրի վարչական տարածքում գյուղատնտեսական նշանակության, այլ հողատեսք հողամասի գլխավոր հատակագծով սահմանված բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման փոփոխելու և քաղաքաշինական գոտու փոփոխություն կատարելու մասին

4)Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

5)Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

6)Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

7) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան և Քարաշամբ գյուղերի, Նոր Հաճըն քաղաքի փողոցների հասցեավորման մասին

8)Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

9)Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

10)Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

11)Նոր Հաճըն համայնքի Նոր Գեղի վարչական տարածքում գոտիավորման փոփոխություն կատարելու և գերակա շահ ճանաչելու մասին

12) Նոր Հաճըն համայնքի ավագանու 2-րդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

Կողմ -11 *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԱՆԻ ԻՍՊԻՐՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՕՋՆԵՑՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ԹՈՎՄԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2026 թվականի N 76-Ա

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 111-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասով, 34-րդ հոդվածի առաջին մասով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի թիվ 201-Ն որոշման 20.1-կետի պահանջները՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Նոր Հաճըն համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 12-ի<< Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2026 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>>N 111-Ա որոշման հավելված N,9,10,11 -ում կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ:

2. Սույն որոշման հավելվածը ուժի մեջ է մտնում իրազեկման օրվանից և տարածվում է 2026 թվականի սեպտեմբերի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Կողմ -11 *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

ԳԱԳԻԿ ՄԱՐԹԵՎՈՍՅԱՆ

ԱՆԻ ԻՍՊԻՐՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՕԶՆԵՑՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ԹՈՎՄԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 9
Նոր Հաճըն համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 12-ի N -Ա որոշման
Փոփոխված 2026թ.-ի սեպտեմբերի 23-ի թիվ 76-Ա որոշմամբ

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ 2026թ

<<ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը՝

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	<<Նոր Հաճընի համայնքապետարանի արվեստի դպրոց>> ՀՈԱԿ	Տնօրեն			1	276000			276000
2		Ուսմասվար			1	184000			184000
3		Հաշվապահ			1	172500			172500
4		Գործավար			1	149500			149500
5		Ուսուցիչ			29.3	172500			5054250
6		Դաշնամուր լարող			1	126500			126500
7		Լաբորանտ			0.5	132250			66125
8		Գրադարանավար			1	138000			138000
9		Տնտեսվար			1	138000			138000
10		Հնոցապան*			1	126500			126500
11		Պահակ			2	138000			276000
12		Հավաքարար			2	138000			276000
		Ընդամենը			**41.8**	**1891750**			**6983375**

* Ծանոթություն- հնոցապանի հաստիքը հաշվարկվում է ջեռուցման սեզոնի 5 ամիսների համար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Հավելված N 10
Նոր Հաճըն համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 12-ի N111 -Ա որոշման
Փոփոխված 2026թ. սեպտեմբի 23-ի թիվ 76-Ա որոշմամբ

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ 2026թ

Նոր Հաճըն համայնքի <<Նոր Գեղիի արվեստի դպրոց>> ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը՝

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7		8	9	10
1	<<Նոր Գեղիի արվեստի դպրոց>> ՀՈԱԿ	Տնօրեն			1	276000				276000
2		Հաշվապահ			1	172500				172500
3		Գործավար			1	149500				149500
4		Ուսուցիչ			22	172500				3795000
5		Դաշնամուր լարող			0.5	126500				63250
6		Տնտեսվար			1	138000				138000
7		Պահակ			1	138000				138000
8		Հավաքարար			1	138000				138000
		Ընդամենը			**28.5**	**1311000**				**4870250**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Հավելված N11
Նոր Հաճըն համայնքի ավագանու
2025 թվականի դեկտեմբերի 12-ի N111 -Ա որոշման
Փոփոխված 2026թ.ի սեպտեմբերի 23-ի թիվ 76-Ա որոշմամբ

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ 2026թ

<<Քանաքեռավանի արվեստի դպրոց>> ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը՝

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	<<Քանաքեռավանի արվեստի դպրոց>> ՀՈԱԿ	Տնօրեն			1	276000			276000
2		Ուսմասվար			1	184000			184000
3		Հաշվապահ			1	172500			172500
4		Գործավար			1	149500			149500
5		Ուսուցիչ			30	172500			5175000
6		Դաշնամուր լարող			1	126500			126500
7		Տնտեսվար			1	138000			138000
8		Դռնապան			1	138000			138000
9		Հավաքարար			1	138000			138000
		Ընդամենը			**38**	**1495000**			**6497500**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱՔԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2026 թվականի N 77-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26 -Ի N 116-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասով, 34-րդ հոդվածի առաջին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1.Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի ավագանու 2026 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 116-Ն որոշման N 2, 3, 6 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -11 *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԱՆԻ ԻՍՊԻՐՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՕՋՆԵՑՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ԹՈՎՄԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված
Նոր Հաճըն համայնքի
ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 23-ի
N 77 - Ն որոշման

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

h/h	Բյուջետային ծախսը				հաստատված գումարը	ավելացում/+/ պակասեցում /-/	գումարը փոփոխությունից հետո
	Գործառնական դասակարգում		Տնտեսագիտական դասակարգում				
	Անվանումը	ծածկագիր	Անվանումը	Հոդված			
1	Տեղական տուրքեր	45.31	Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների շինարարության թույլտվության համար		50000.0	112100.0	162100.0
2	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից գումարի ուղղում ֆոնդային բյուջե	49.01			250000.0	50000.0	300000.0
3	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ	11.1.1	Պահուստային միջոցներ	4891	6672.0	50000.0	56672.0
4	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ	11.1.1	Պահուստային միջոցներ	4891	56672.0	-50000.0	6672.0
5	Ջրակոչի կազմակերպում	02.5.1	Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	600.0	100.0	700.0
6	Բնակարանային շինարարություն	06.1.1	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	319365.0	100600.0	419965.0
7	Կոմունալ ծառայություններ	06.6.1	Սուբսիդիաներ ոչ ֆինանսական կազմակերպություններին	4511	235000.0	28500.0	263500.0
8	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	08.2.3	Սուբսիդիաներ ոչ ֆինանսական կազմակերպություններին	4511	76000.0	4000.0	80000.0
9	Միջոցառումների իրականացում	08.2.4	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	15000.0	6000.0	21000.0
10	Միջոցառումների իրականացում	08.2.4	Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	10500.0	1500.0	12000.0
11	Նախադպրոցական կրթություն	09.1.1	Սուբսիդիաներ ոչ ֆինանսական կազմակերպություններին	4511	475000.0	14000.0	489000.0
12	Արտադպրոցական կրթություն	09.5.1	Սուբսիդիաներ ոչ ֆինանսական կազմակերպություններին	4511	265000.0	8000.0	273000.0
13	Արտադպրոցական կրթություն	09.5.1	Շենքերի և շինությունների կառուցում	5112	216000.0	-50600.0	165400.0
	Ընդամենը				1675809.0	112100.0	1787909.0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱՔԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2026 թվականի N 78-Ա

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ և ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՏՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետով և 24-րդ կետի 4-րդ և 10-րդ ենթակետերով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 07.07.2026 թվականին ներկայացված N 01/03 . 1/05851-2026 գրությունը և շահագրգիռ մարմինների կարծիքները՝Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է

1. Փոփոխել ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող՝ քաղաքացու սեփականությունը հանդիսացող, 07-064-0396-0003 կադաստրային ծածկագրով, 0,2703 հա մակերեսով հողամասի՝ Կոտայք-6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթով սահմանված՝ բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակությունը՝ սահմանելով այն որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:

2. Հաստատել ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող՝ քաղաքացու սեփականությունը հանդիսացող, 07-064-0396-0003 կադաստրային ծածկագրով, 0,2703 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի համար գլխավոր հատակագծի տեքստային և գոտևորման մասերով սահմանված քաղաքաշինական գոտու փոփոխությունը՝ ՀԿԳ-2 գոտուց ԲՆԿԳ-3 գոտի:

3. Սահմանել, որ սույն որոշմամբ հաստատված փոփոխությունը հիմք է հանդիսանում նշված հողամասում բնակելի բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցապատման նախագծման և հետագա թույլտվությունների տրամադրման համար՝ բացառապես ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների պահպանմամբ:

4. Սահմանել, որ կառուցապատման հետագա գործընթացները պետք է իրականացվեն՝

1) ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջներին համապատասխան,

2) հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունների կողմից ներկայացված պայմանները:

5. Առաջադրել Նոր Հաճըն համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշմամբ հաստատված փոփոխությունները արտացոլել Նոր Հաճըն համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

2) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշումից բխող փոփոխությունների ներառումը Նոր Հաճըն համայնքի (Քանաքեռավան բնակավայր) հաստատված գոտևորման նախագծում,

3) սույն որոշման ընդունման մասին սահմանված կարգով տեղեկացնել ՀՀ քաղաքաշինության կոմիտեին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԳԻԿ ՄԱՐԹԵՎՈՍՅԱՆ

ԱՆԻ ԻՍՊԻՐՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՕՋՆԵՑՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ԹՈՎՄԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2026 թվականի N 79-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքաշինության մասին օրենքի 14^3 հոդվածի 5-րդ կետի , Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 29 կետի , ՀՀ Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ . դեկտեմբերի 22-ի 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2026 թվականի օգոստոսի 28-ի թիվ 1/փ-373 դրական եզրակացությունը Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է՝

1 . Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան բնակավայրի գլխավոր հատակագծում կատարել համապատասխան փոփոխություններ՝ Նոր Հաճըն համայնքի սեփականություն հանդիսացող 07-064-0105-0040 կադաստրային ծածկագրով 0,00905 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակությամբ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԳԻԿ ՄԱՐԹԵՎՈՍՅԱՆ

ԱՆԻ ԻՍՊԻՐՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՕՋՆԵՑՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ԹՈՎՄԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2026 թվականի N 80-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքաշինության մասին օրենքի 14^3 հոդվածի 5-րդ կետի , Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 29 կետի , ՀՀ Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ . դեկտեմբերի 22-ի 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2026 թվականի հուլիսի 14-ի N 1/փ-333 եզրակացությունը և համաձայն սեփականատիրոջ դիմումի Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է

1 . Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, բավարարել քաղաքացի Երջանիկ Խաչիկի Թումասյանի դիմումը և, Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան գյուղի գլխավոր հատակագծին համապատասխան, Երջանիկ Խաչիկի Թումասյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 07-064-0313-0315 կադաստրային ծածկագրով, 0.04 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել՝ սահմանելով բնակավայրերի նպատակային նշանակության ՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ հողամաս:

2. Հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոփոխված՝ հողամասի կադաստրային արժեքների տարբերության վճարումն իրականացնելուց հետո:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական ծանուցմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԱՆԻ ԻՍՊԻՐՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՕՋՆԵՑՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ԹՈՎՄԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2026 թվականի N 81-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքաշինության մասին օրենքի 14^3 հոդվածի 5-րդ կետի , Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29 կետի , ՀՀ Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ . դեկտեմբերի 22-ի 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2026 թվականի հուլիսի 6-ի N 1/փ-278 եզրակացությունը և համաձայն սեփականատիրոջ դիմումի Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է՝

1 . Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, բավարարել քաղաքացի Աշոտ Միսակի Մանուկյանի դիմումը և, Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան գյուղի գլխավոր հատակագծին համապատասխան, Աշոտ Միսակի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 07-064-0342-0020 կադաստրային ծածկագրով, 0.05 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության խաղող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել՝ սահմանելով բնակավայրերի նպատակային նշանակության ՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ հողամաս:

2. Հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոփոխված՝ հողամասի կադաստրային արժեքների տարբերության վճարումն իրականացնելուց հետո:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական ծանուցմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԱՆԻ ԻՍՊԻՐՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՕՋՆԵՑՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ԹՈՎՄԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2026 թվականի N 82-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ԵՎ ՔԱՐԱՇԱՄԲ ԳՅՈՒՂԵՐԻ, ՆՈՐ ՀԱՃԸՆ ՔԱՂԱՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետով, Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան գյուղում գտնվող 07-064-0353-0532-ից կադաստրային ծածկագրից բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման ճանապարհին տալ հետևյալ հասցեն՝ համայնք Նոր Հաճըն, գյուղ Քանաքեռավան, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան գյուղում գտնվող 07-064-0353-0532-ից կադաստրային ծածկագրից բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման ճանապարհին տալ հետևյալ հասցեն՝ համայնք Նոր Հաճըն, գյուղ Քանաքեռավան, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք 1-ին փակուղի:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան գյուղում գտնվող 07-064-0353-0532-ից կադաստրային ծածկագրից բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման ճանապարհին տալ հետևյալ հասցեն՝ համայնք Նոր Հաճըն, գյուղ Քանաքեռավան, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք 2-րդ փակուղի:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Նոր գտնվող 07-064-0353-0549-ից կադաստրային ծածկագրից բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման ճանապարհին տալ հետևյալ հասցեն՝ համայնք Նոր Հաճըն, գյուղ Քանաքեռավան, 7-րդ փողոց, 1-ին փակուղի:

5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Նոր Հաճըն քաղաքում 07-006-0540-0001-ից կադաստրային ծածկագրից բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման ճանապարհին տալ հետևյալ հասցեն՝ համայնք Նոր Հաճըն, Նոր Հաճըն քաղաք, Պարգևաշեն 3-րդ թաղամասի 1-ին փողոց 1-ին փակուղի:

6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Քարաշամբ գյուղում 07-066-0302-0350-ից կադաստրային ծածկագրից բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման ճանապարհին տալ հետևյալ հասցեն՝ համայնք Նոր Հաճըն, գյուղ Քարաշամբ, 1-ին փողոց, 4-րդ նրբանցք

7 . Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԱՆԻ ԻՍՊԻՐՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՕՋՆԵՑՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ԹՈՎՄԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2026 թվականի N 83-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածի 15-րդ կետի, Քաղաքաշինության մասին օրենքի 14^3 հոդվածի 12-րդ կետի և հիմք ընդունելով սեփականատիրոջ դիմումը՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1.Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, բավարարել <**Գրին պրոդագրո> ՍՊԸ** գործադիր մարմնի ղեկավար Հարություն Սամվելի Կարապետյանի դիմումը և Նոր Հաճըն համայնքի Նոր Գեղի գյուղում վերջինիս սեփականություն հանդիսացող 07-048-0215-0005 կադաստրային ծածկագրով 12.0497 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողամասի նպատակային նշանակությունը /սեփականության վկայական 09062026-07-0005/ փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ ջերմոցային տնտեսություն (ջերմոց, ոռոգման բլոկ, փաթեթավորման բլոկ, պահեստ, սառնարան, կենցաղային և վարչական բլոկ, կաթսայատուն, կուտակման բաք, ենթակայան) կառուցելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական ծանուցմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԳԻԿ ՄԱՐԹԵՎՈՍՅԱՆ

ԱՆԻ ԻՍՊԻՐՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՕՋՆԵՑՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ԹՈՎՄԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2026 թվականի N 84-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածի 15-րդ կետի, Քաղաքաշինության մասին օրենքի 14^3 հոդվածի 12-րդ կետի և հիմք ընդունելով Վարդան Վլադիմիրի և Նարինե Ռաֆիկի Ավանեսյանների դիմումը՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է՝

1.Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, բավարարել Վարդան Վլադիմիրի և Նարինե Ռաֆիկի Ավանեսյանների դիմումը և Նոր Հաճըն համայնքի Նոր Գեղի գյուղում վերջինիս սեփականություն հանդիսացող 07-048-0418-0021 կադաստրային ծածկագրով 0,09306 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հնդավոր հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, գյուղմթերքի վերամշակման տնետսություն կառուցելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական ծանուցմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԳԻԿ ՄԱՐԹԵՎՈՍՅԱՆ

ԱՆԻ ԻՍՊԻՐՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՕՋՆԵՑՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ԹՈՎՄԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2026 թվականի N 85-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածի 15-րդ կետի, Քաղաքաշինության մասին օրենքի 14^3 հոդվածի 12-րդ կետի և հիմք ընդունելով Արամ Արսենի Մարգարյանի դիմումը՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է

1.Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, բավարարել Արամ Արսենի Մարգարյանի դիմումը և Նոր Հաճըն համայնքի Նոր Արտամետ գյուղում վերջինիս սեփականություն հանդիսացող 07-047-0109-0022 կադաստրային ծածկագրով 0,2361 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հնդավոր հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, գյուղմթերքի վերամշակման տնտեսություն և հացահատիկի պահեստ կառուցելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական ծանուցմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԱՆԻ ԻՍՊԻՐՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՕՋՆԵՑՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ԹՈՎՄԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2026 թվականի N 86-Ա

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԳԵՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳԵՐԱԿԱ ՇԱՀ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» ՀՀ օրենքի 18-րդ և 42-րդ հոդվածների և «Քաղաքաշինության Մասին» ՀՀ օրենքի պահաջներով և հաշվի առնելով մշակույթի ու հոգևոր ժառանգության անբողջական միջավայրի փոխանցման կարևորությունը սերունդներին, ինչպես նաև Նոր Գեղի համայնքի «Սուրբ Հովհաննես» եկեղեցուն հարակից համայնքային զբոսայգի սրեղծելու անհրաժեշտությունը՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել չկառուցապատման գոտի՝ 07-048-0102-0012, 07-048-0102-0016, 07-048-0102-0016, 07-048-0102-0034 ծածկագրերի տակ գտնվող հողամասերը:

2. Համայնքի ղեկավարին՝

2.1 Ապահովել սույն որոշման ընթացքը՝ անհրաժեշտության դեպքում մշակել և ներկայացնել համայնքի գլխավոր հատակագծում գոտիավորման փոփոխություն կատարելու մասին համապատասխան նախագիծ:

2.2 Առաջարկել 07-048-0102-0015 ծածկագրի տակ գտնվող հողամասի սեփականատիրոջը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասը օտարել համայնքին շուկայական գնահատված արժեքի չափով կամ փոխարինել համայնքի վարչական սահմաններում գտնվող և համայնքային սեփականություն հանդիսացող համարժեք հողամասով, իսկ անհամաձայնության դեպքում օրենքով սահմանված կարգով միջոցներ ձեռնարկել հողամասը հանրային գերակա շահ ճանաչելու՝ համայնքային զբոսայգի կառուցելու նպատակով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ -2 *Դեմ -0* *Ձեռնպահ -9*

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԱՆԻ ԻՍՊԻՐՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՕՋՆԵՑՅԱՆ

ԹՈՎՄԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 սեպտեմբերի 2026 թվականի N 87-Ա

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2- ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի, Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Նոր Հաճըն համայնքի ավագանու 2- րդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանել 2026 թվական հոկտեմբերի 16 -ին՝ժամը 17:00 -ին :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԱՆԻ ԻՍՊԻՐՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՕՋՆԵՑՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ԹՈՎՄԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**